ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Սիմոնյան,**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 65-րդ հոդվածի 1-ին մասով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Նախագծին կից ներկայացվում են դրա ընդունման հիմնավորումը, տեղեկանքներ, որտեղ տեսանելի ձևով ներկայացվում են համապատասխան հոդվածներում առաջարկվող փոփոխությունները, լրացումները և խմբակցության որոշումն՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ:

Նախագծի հիմնական զեկուցողն է Բաբկեն Թունյանը:

Խնդրում ենք նախագծերը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

**06.10.2025թ.**

0095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 65-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն իր 2025 թվականի հոկտեմբերի 6-ի նիստում

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և շրջանառության մեջ դնել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

**06.10.2025թ.**

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 52-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Անկախ սույն հոդվածով սահմանված կարգավորումներից՝ Օրենսգրքի՝ համապատասխան հարկին կամ վճարին վերաբերող բաժիններով կարող են սահմանվել հարկային հաշվարկի և դրա կազմմանը վերաբերող առանձնահատկություններ:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 53-րդ հոդվածի՝

1) 1-ին և 2-րդ մասերում «և 4-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով,

2) 6-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկի տարեկան հաշվարկն (հայտարարագիրն) ուշ ներկայացնելու կամ եկամտային հարկը ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, հարկային հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման և եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը

Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկը ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ:»,

3) 7-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Օրենսգրքի 156.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում հարկային հաշվարկը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին ներկայացնելու՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետի օրը:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասում «կողմից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Օրենսգրքի 156.1-ին հոդվածով սահմանված կարգով» բառերը:

**Հոդված 4.** Օրենսգրքի 7-րդ բաժնում «նվազեցվող եկամուտ» բառերը համապատասխան հոլովածներով փոխարինել «նվազեցվող (չհարկվող) եկամուտ» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

**Հոդված 5.** Օրենսգրքի 156-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասի 2-րդ կետում «մարտի 2-ից» բառերից հետո լրացնել «(մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից)» բառերը, իսկ «(հայտարարագրեր)» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերի» բառերը.

2) 4.1-ին մասում՝

ա. առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող և տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող ֆիզիկական անձինք (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից (մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են

ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Կառավարությունը կարող է սահմանել եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա եկամուտների տեսակներ կամ շեմեր:»:

**Հոդված 6.** Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 156.1-ին հոդված.

**«Հոդված 156.1 Եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) նախալրացումը և ներկայացված համարվելը**

1. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց համար եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է հարկային մարմինը՝ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

2. Հարկային մարմնի նախալրացրած՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմինը ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնելու համար Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում:

3. Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք կարող են Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում փոփոխել հարկային մարմնի նախալրացրած՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) և Օրենսգրքով սահմանված կարգով ներկայացնել հարկային մարմին: Սույն մասով սահմանված դեպքում հարկային մարմինը եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է ֆիզիկական անձի կողմից հաշվարկը (հայտարարագիրը) ստորագրելու օրվան նախորդող օրվա դրությամբ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

4. Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի կողմից Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը համարվում է Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված: Սույն մասով սահմանված դեպքում հարկային մարմինը

եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու վերջնաժամկետի դրությամբ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա։»։

**Հոդված 7.** Օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ընդ որում, սոցիալական ծախսը սույն մասի համաձայն փոխհատուցվում է, եթե եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող անձը օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը)։»։

**Հոդված 8.** Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասում «ներկայացրած՝» բառը փոխարինել «կողմից, ինչպես նաև Օրենսգրքի 156.1-ին հոդվածով սահմանված կարգով ներկայացված՝» բառերով։

**Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի կիրառումը տարածվում է 2024 թվականի և հետագա հաշվետու տարիների վրա։

3. 2024 թվականի հաշվետու տարվա համար հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմինը ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 2026 թվականի մարտի 2-ից։ Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք հնարավորություն ունեն հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) փոփոխել և Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ, իսկ 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ։

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում։

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-247 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետում «բացառությամբ «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի» բառերը փոխարինել «բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի» բառերով.

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) **ֆիզիկական անձ**՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի.

3) լրացնել 12-րդ կետով.

«12) **եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող**՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի:»:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը 6 լրացնել 7-րդ կետով.

«7) եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց դեպքում նաև՝ Կառավարության սահմանած՝ հայտարարագրման համակարգի շրջանակներում անհրաժեշտ տվյալները:»:

**Հոդված 3.** Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի, ինքնազբաղված անձի» բառերը փոխարինել «ֆիզիկական անձի» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել 5-րդ և 6-րդ կետերով.

«5) ֆինանսական կազմակերպություններից և ապահովագրական ընկերություններից.

6) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայից:».

2) 2-րդ մասում «ռեեստրը վարողը,» բառերից հետո լրացել «Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, կենտրոնական դեպոզիտարիան,» բառերը.

3) 4-րդ մասում՝

ա. «ռեեստրը վարողի» բառերից հետո լրացել «, Հայաստանի Հանրապետության կենտրոնական դեպոզիտարիայի» բառերը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների կողմից տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները լիազոր մարմին տրամադրելու կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով:»:

**Հոդված 5.** Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) վերնագրում «ինքնազբաղվածների» բառերից հետո լրացնել «եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց» բառերը.

2) 1-ին մասում «ինքնազբաղված անձինք» բառերից հետո լրացնել «, եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք» բառերը, իսկ «յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ժամկետներում» բառերով.

3) 2-րդ մասում «ինքնազբաղված անձանց» բառերից հետո լրացնել «, եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց» բառերը:

**Հոդված 6.** Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով.

«2. Սույն հոդվածը չի տարածվում բանկային և ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների վրա, որոնք լիազոր մարմինը պահպանում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

**Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2.Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.1-ին հոդվածի՝

1) առաջին պարբերությունում «հայտարարագրի» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված հաշվարկի (հայտարարագրի)» բառերը,

2) երկրորդ պարբերությունում «Բացառությամբ սույն հոդվածի երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերություններով սահմանված դեպքերի, հայտարարագիրը» բառերը փոխարինել «Հայտարարագիրը» բառով, իսկ «ֆինանսական հաշվետվությունների» բառերից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված հաշվարկի (հայտարարագրի)» բառերը:

3) երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ պարբերությունները ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենսգրքի 169.33-րդ հոդվածի 1-ին մասում «հաշվարկում» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված հաշվարկի (հայտարարագրի),» բառերը:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա մայիսի 1-ը ներառյալ» բառերը փոխարինել «տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում» բառերով, իսկ «մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ» բառերը փոխարինել «տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հիմնավորում**

**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման վերաբերյալ**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).** Նախագծերի նպատակը ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի պարզեցումն ու բարելավումն է:

**2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.** ՀՀ հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգավորումների համաձայն՝

1) հարկային մարմինը նախալրացնում է հայտարարատու ֆիզիկական անձանց եկամտային հարկի տարեկան հաշվարկները (հայտարարագրերը), սակայն դրանք Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի հայտարարատու ֆիզիկական անձինք օրենսդրությամբ սահմանված կարգով էլեկտրոնային ստորագրությամբ հաստատեն հայտարարագիրը և ներկայացնեն հարկային մարմին,

2) ըստ էության, հայտարարագրման ենթակա են ֆիզիկական անձանց կողմից հաշվետու տարվա ընթացքում ստացված՝ Օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն անձնական բոլոր եկամուտները: Միաժամանակ, Օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անձնական եկամուտներ են համարվում նաև այնպիսի եկամուտները, որոնք Օրենսգրքով որպես անձնական եկամուտ սահմանվել են ոչ թե հայտարարագրման ենթակա լինելու նպատակադրումներով, այլ ֆիզիկկան

անձանց եկամուտների հարկման ընդհանուր համակարգի տրամաբանությանը համահունչ լինելու տեսանկյունից:

Միաժամանակ, հայտարարագրման համակարգի ներդրմանը զուգահեռ սահմանվել են նաև հայտարարագրերը նախալրացնելու ընթացակարգեր, որոնց շրջանակներում հարկային մարմինը հնարավորություն ունի իր մոտ առկա տեղեկատվության հիման վրա նախալրացնելու հայտարարագրերը: Նախալրացման համակարգի շրջանակում հարկային մարմինը տիրապետում կամ կարող է տիրապետել ֆիզիկական անձանց եկամուտների հիմնական մասի վերաբերյալ տեղեկատվության և հետևաբար իր կողմից նախալրացված հայտարարագիրը հիմնականում արտացոլում է ֆիզիկական անձանց եկամուտների հիմնական մասը: Բացի այդ, կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արդեն իսկ հայտարարագիր ներկայացրած ֆիզիկական անձանց հիմնական մասը հարկային մարմնի կողմից նախալրացված հայտարարագիրը չի փոփոխում: Ուստի, բոլոր այն դեպքերում, երբ հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը արտացոլում է ֆիզիկական անձի եկամուտների ամբողջական պատկերը, նախալրացված հայտարարագիրը հայտարարատու ֆիզիկական անձի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու և հարկային մարմին ներկայացնելու օրենսդրական կարգավորումը լրացուցիչ անհարմարություններ է ստեղծում այդ ֆիզիկական անձանց համար: Բացի այդ, ֆիզիկական անձանց համար անհարմարություններ է ստեղծում նաև Հարկային օրենսգրքով սահմանված բոլոր անձնական եկամուտները հայտարարագրելու պահանջը:

Բացի այդ, «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգավորումների համաձայն հարկային մարմինը ոչ բոլոր կազմակերպություններից է ստանում ֆիզիկական անձանց եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն:

Մյուս կողմից, Օրենսգրքով եկամտային հարկի հաշվարկների ներկայացման և հարկի վճարման ժամկետները վերանայելով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված հայտարարագիրը չներկայացնելու համար: Հարցը այն է, որ հայտարարագրերի նախալրացման նոր համակարգը ներդնելու դեպքում նշյալ պատասխանատվության անհրաժեշտությունը բացակայելու է:

**3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.** Նախագծերով առաջարկում է վերանայել ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման՝ գործող օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը և էականորեն պարզեցնել այն: Մասնավորապես, առաջարկվում է՝

1) սահմանել, որ հայտարարագիրը նախալրացնում է հարկային մարմինը՝ իր մոտ առկա տեղեկատվության հիման վրա: Հարկային մարմինը նախալրացված հայտարարագիրը հայտարարատու համարվող ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում հայտարարագիրը ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում, որի ընթացքում հայտարարատու ֆիզիկական անձը հնավորություն է ունենալու փոփոխել այն և սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել հարկային մարմին: Հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը նշյալ ժամանակահատվածում հայտարարատու ֆիզիկական անձի կողմից փոփոխությունների չենթարկվելու դեպքում հայտարարագիրը ներկայացնելու համար Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետի օրը այն համարվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված,

2) սահմանել, որ սոցիալական ծախսը ֆիզիկական անձին փոխհատուցվում է, եթե վերջինս օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը),

3) հայտարարագրման ոչ ենթակա եկամուտների ցանկ կամ առանձին եկամտատեսակների շեմեր սահմանելու իրավասությունը վերապահել Կառավարությանը,

4) սահմանել, որ հարկային մարմինը ֆիզիկական անձանց եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն է ստանում նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպություններից, ապահովագրական ընկերություններից, կենտրոնական դեպոզիտարիայից,

5) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքով որպես ընդհանուր կարգավորում սահմանել, որ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը կատարում են տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ տարեկան կտրվածքով՝ Օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում,

6) ուժը կորցրած ճանաչել հայտարարագիրը չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված պատասխանատվությունը:

**4. Կարգավորման առարկան.** Նախագծերի կարգավորման առարկան եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման ընթացակարգի հետ կապված հարաբերություններն են:

**5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.** Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է էականորեն պարզեցնել եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման ընթացակարգը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

**Հոդված 52. Հարկային հաշվարկը և դրա կազմումը**

1. Հարկային հաշվարկը հարկ վճարողի (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի, հավատարմագրային կառավարչի, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի, կոմիսիոների, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալի, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողի կամ խնամակալի կամ հոգաբարձուի) կողմից հարկային մարմին ներկայացվող գրավոր տեղեկատվություն է հաշվետու ժամանակաշրջանում կամ Օրենսգրքով սահմանված հարկման օբյեկտ համարվող որևէ գործարքի կամ գործառնության, դրա համար հաշվարկված հարկի կամ վճարի վերաբերյալ:

2. Հարկային հաշվարկներում պարտադիր լրացման ենթակա են հետևյալ տվյալները.

1) հարկ վճարողի լրիվ անվանումը.

2) հարկ վճարողի գտնվելու վայրը.

3) հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը.

4) հաշվետու ժամանակաշրջանը կամ Օրենսգրքով սահմանված հարկման օբյեկտ համարվող գործարքի կամ գործունեության կատարման օրը, որի համար ներկայացվում է հարկային հաշվարկը.

5) հարկ վճարողի (հարկ վճարողի պաշտոնատար անձի) կամ հարկ վճարողի լիազոր անձի ստորագրությունը.

6) հարկային հաշվարկի լրացման կարգով սահմանված այլ տվյալներ:

2.1. Հարկային մարմինը կարող է իր տեղեկատվական բազայում առկա տվյալների (այդ թվում՝ Օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված) հիման վրա ինքնաշխատ նախալրացնել հարկային հաշվարկները:

3. Համատեղ գործունեության հաշվետու մասնակցի կողմից համատեղ գործունեության համար ներկայացվող հարկային հաշվարկներում (այդ թվում՝ ճշտված) արտացոլվում են ինչպես համատեղ գործունեությանը վերաբերող, այնպես էլ անմիջականորեն համատեղ գործունեության հաշվետու մասնակցին վերաբերող ցուցանիշները (արդյունքները): Անհրաժեշտության դեպքում համատեղ գործունեության մասով հարկային պարտավորությունները ճշտելու և դրանց գանձումն ապահովելու նպատակով համատեղ գործունեության հաշվետու մասնակցի հաշվառման հարկային մարմինը իրավունք ունի համատեղ գործունեության հաշվետու մասնակցից գրավոր պահանջելու ներկայացնել լրացուցիչ գրավոր տեղեկություններ՝ նրա կողմից ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված ընդհանուր ցուցանիշներում համատեղ գործունեությանը վերաբերող ցուցանիշների (արդյունքների) վերաբերյալ: Համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը պարտավոր է սույն մասով սահմանված տեղեկությունները ներկայացնել հարկային մարմնից համապատասխան պահանջը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Հարկային հաշվարկների ձևերը և դրանց լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը (այդ թվում՝ Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային հաշվարկը այլ գերատեսչություններին նույնպես ներկայացնելու պահանջ սահմանված լինելու դեպքերում՝ այդ գերատեսչությունների հետ համատեղ): Անկախ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հարկային հաշվարկում պարտադիր լրացման ենթակա տվյալներից, հարկային հաշվարկի ձևում նախատեսված լինելու դեպքերում պարտադիր լրացման ենթակա են նաև ֆիզիկական անձին վերաբերող անձնական տվյալները, այդ թվում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, հեռախոսահամարը, ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկատվությունը:

5. Անկախ սույն հոդվածով սահմանված կարգավորումներից՝ Օրենսգրքի՝ համապատասխան հարկին կամ վճարին վերաբերող բաժիններով կարող են սահմանվել հարկային հաշվարկի և դրա կազմմանը վերաբերող առանձնահատկություններ:

**Հոդված 53. Հարկային հաշվարկի ներկայացումը**

1. Հարկ վճարողը (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը, հավատարմագրային կառավարիչը, համատեղ գործունեության հաշվետու մասնակիցը, կոմիսիոները, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալը, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) հարկային հաշվարկները հարկային մարմին է ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետներում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով ~~և 4-րդ մասերով~~ սահմանված դեպքերի:

2. Մինչև հաշվետու ժամանակաշրջանը ավարտվելը տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկները համարվում են չներկայացված, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով ~~և 4-րդ մասերով~~ սահմանված դեպքերի:

6. Եթե հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը մինչև համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը տեղադրված չէ հարկային մարմնի կայքում, ապա հարկային հաշվարկն ուշ ներկայացնելու կամ հարկը (վճարը) ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, համապատասխան հարկային հաշվարկի ներկայացման կամ հարկի (վճարի) վճարման համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սաf156հմանված վերջնաժամկետը հետաձգվում է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվանից մինչև հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը հարկային մարմնի կայքում տեղադրվելու օրը ներառված օրերի չափով: ~~Այն ֆիզիկական անձը, որը մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը դիմել է Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար, սակայն մինչև նշված վերջնաժամկետը չի ստացել նույնականացման քարտը, եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնում է կամ եկամտային հարկը վճարում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ:~~ Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ֆիզիկական անձանց կողմից

մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկի տարեկան հաշվարկն (հայտարարագիրն) ուշ ներկայացնելու կամ եկամտային հարկը ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, հարկային հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման կամ եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկը ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ:

7. Հարկային հաշվարկը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում հարկային մարմնի՝ հարկային հաշվարկների ընդունման էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հարկ վճարողին ներկայացվող՝ հարկային հաշվարկի ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցագրում նշված օրը, իսկ հարկային հաշվարկը թղթային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում հարկային հաշվարկը փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը: Օրենսգրքի 156.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում հարկային հաշվարկը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին ներկայացնելու՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետի օրը:

**Հոդված 54. Հարկային հաշվարկի ճշտումը**

1. Հարկ վճարողի (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի, հավատարմագրային կառավարչի, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի, կոմիսիոների, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալի, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողի կամ խնամակալի) կողմից, Օրենսգրքի 156.1-ին հոդվածով սահմանված կարգով —հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են ներկայացվել ճշտված հարկային հաշվարկներ: Տրանսֆերային գնագոյացման ճշտված հարկային հաշվարկներ կարող են ներկայացվել Օրենսգրքի 374-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

**Հոդված 143. Եկամտային հարկով հարկման բազան**

1. Եկամտային հարկով հարկման բազա է համարվում՝

1) ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված ~~նվազեցվող եկամուտների~~ նվազեցվող (չհարկվող) եկամուտների դրական տարբերություն.

2) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված ~~նվազեցվող եկամուտների~~ նվազեցվող (չհարկվող) եկամուտների դրական տարբերություն:

**Հոդված 147. ~~Նվազեցվող եկամուտները~~ Նվազեցվող (չհարկվող) եկամուտները (նվազեցումները)**

1. Հարկման բազան որոշելու նպատակով ~~նվազեցվող եկամուտներ~~ նվազեցվող (չհարկվող) եկամուտներ են համարվում՝

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները: Սույն կետի կիրառության իմաստով՝ ~~նվազեցվող եկամուտ~~ նվազեցվող (չհարկվող) եկամուտ չի համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված

շենքի կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվության կարգով ստացվող գույքը.

16) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝ ~~նվազեցվող եկամուտներ~~ նվազեցվող (չհարկվող) եկամուտներ չեն համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող (համարված) ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների)՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամուտները, ինչպես նաև սույն մասի 16.1-ին կետով սահմանված՝ էությամբ եզակի համարվող (յուրաքանչյուրն առանձնահատուկ հատկանիշներ ունեցող) և փոխարինելի չհամարվող կրիպտոակտիվի օտարումից ստացվող եկամուտները, ապակենտրոնացված գրանցամատյանի պահպանման կամ գործարքների վավերացման համար իրականացվող գործունեության արդյունքում ավտոմատ կերպով որպես պարգևատրում ստեղծված կրիպտոակտիվների օտարումից ստացվող եկամուտները.

**Հոդված 148. Գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից ստացվող եկամուտները**

1. Հարկման բազան որոշելու նպատակով ~~նվազեցվող եկամուտներ~~ նվազեցվող (չհարկվող) եկամուտներ են համարվում նաև գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված ֆիզիկական անձանց՝ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները:

**Հոդված 149. Արժեթղթերից ստացվող եկամուտները**

1. Սույն հոդվածով այլ բան սահմանված չլինելու դեպքում հարկման բազան որոշելու նպատակով ~~նվազեցվող եկամուտներ~~ նվազեցվող (չհարկվող) եկամուտներ են համարվում նաև՝

1) գանձապետական պարտատոմսերի, պետական այլ արժեթղթերի և Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի գծով ստացվող տոկոսը, մարման ժամանակ ստացվող զեղչը և (կամ) օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը.

2. Հարկման բազան որոշելու նպատակով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված եկամուտները չեն համարվում ~~նվազեցվող եկամուտներ~~ նվազեցվող (չհարկվող) եկամուտներ (չեն նվազեցվում համախառն եկամտից), եթե՝

1) ստացվում են որպես վճարման միջոց տրված մուրհակի, վճարագրի կամ վճարային այլ արժեթղթի օտարումից.

**Հոդված 156. Եկամտային հարկի հաշվարկները և այլ փաստաթղթերը ներկայացնելը**

4. Ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն)՝

1) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի պարզեցված հաշվարկներ.

2) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից (մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր), բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերի:

~~4.1. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) չներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության~~

~~ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):~~

4.1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող և տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող ֆիզիկական անձինք (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից (մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):

Ֆիզիկական անձինք սույն մասով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկները (հայտարարագրերը) ներկայացնում են հետևյալ ժամկետներում.

1) 2023 թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

բ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ),

գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն.

2) 2024 թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

բ. 2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

գ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2023 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր փայատեր, անդամ),

ե. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

զ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,

է. սույն պարբերության 1-ին կետում նշված ֆիզիկական անձինք.

3) 2025 թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող տարիների համար՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Անկախ սույն մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգավորումներից՝ 2023 թվականի և 2024 թվականի հաշվետու տարիների համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) չեն ներկայացնում այն անձինք, որոնց վերաբերող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն համարվող՝ հարկվող եկամուտների մասով:

Կառավարությունը կարող է սահմանել եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա եկամուտների տեսակներ կամ չեմեր:

**Հոդված 156.1 Եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) նախալրացումը և ներկայացված համարվելը**

1. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց համար եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է հարկային մարմինը՝ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

2. Հարկային մարմնի նախալրացրած՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմինը ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնելու համար Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում:

3. Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք կարող են Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում փոփոխել հարկային մարմնի նախալրացրած՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) և Օրենսգրքով սահմանված կարգով ներկայացնել հարկային մարմին: Սույն մասով սահմանված դեպքում հարկային մարմինը եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է ֆիզիկական անձի կողմից հաշվարկը (հայտարարագիրը) ստորագրելու օրվան նախորդող օրվա դրությամբ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

4. Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի կողմից Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը համարվում է Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված: Սույն մասով սահմանված դեպքում հարկային մարմինը եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու վերջնաժամկետի դրությամբ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:»:

**Հոդված 158. Եկամտային հարկի գումարի վճարումը և սոցիալական ծախսերի փոխհատուցումը (վերադարձը)**

3. Հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի՝ Օրենսգրքի 147.1-ին հոդվածով սահմանված սոցիալական ծախսերը Օրենսգրքի 143-րդ հոդվածով սահմանված հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերով հաշվարկված և (կամ) վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի կողմից) եկամտային հարկի գումարից փոխհատուցվում (վերադարձվում) են Կառավարության սահմանած կարգով: Ընդ որում, սոցիալական ծախսը սույն մասի համաձայն փոխհատուցվում է, եթե եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող անձը օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը):

**Հոդված 311. Հարկային հաշվարկների ընդունումը**

1. Հարկային մարմինը Օրենսգրքով սահմանված դեպքերում ընդունում է հարկ վճարողի կամ հարկային գործակալի ~~ներկայացրած՝~~ կողմից, ինչպես նաև Օրենսգրքի 156.1-ին հոդվածով սահմանված կարգով ներկայացված՝ Օրենսգրքով սահմանված հարկային հաշվարկները:

2. Հարկային հաշվարկները հարկային մարմին ներկայացնելու նպատակով հարկ վճարողը կամ հարկային գործակալը Օրենսգրքի 310-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հարկային մարմնի հետ կնքում է ԷՆՊ, ստանում է էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ:

3. Հարկային հաշվարկը հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում էլեկտրոնային համակարգը օգտվողին ներկայացնում է ծանուցում, որով հավաստվում է հարկային հաշվարկն ընդունելու փաստը, ամսաթիվը և տեղեկատվական բազայում գրանցման համարը: Ծանուցման մեջ նշված ամսաթիվը հանդիսանում է հարկային հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու օր:

4. Հարկ վճարողի կատարած գործողությունների պատմությունը պահպանվում է կայքի համապատասխան դարանում, որտեղից հարկ վճարողը կարող է արտածել և տպել հարկային հաշվարկը:

5. Հարկային մարմինը օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է էլեկտրոնային եղանակով ընդունված հարկային հաշվարկի տվյալների պաշտպանվածությունը և պահպանումը հարկային մարմնի տեղեկատվական համակարգում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

**Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

3) **անհատ ձեռնարկատեր՝** ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ~~բացառությամբ «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի~~ բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի.

~~6) **ֆիզիկական անձ՝** վարձու աշխատող, ինքնազբաղված անձ, անհատ ձեռնարկատեր, նոտար, պայմանագրային եկամուտ ստացող.~~

6) **ֆիզիկական անձ՝** համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի.

11) **գործատու՝** համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.~~:~~

12) **եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող՝** համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի:

**Հոդված 7. Տեղեկատվական բազայում ներառվող տվյալները**

1. Տեղեկատվական բազան ներառում է՝

1) ֆիզիկական անձանց վերաբերող հետևյալ տվյալները.

ա. ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը և տարին, անձի մահվան դեպքում՝ մահվան օրը, ամիսը և տարին,

բ. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի և, առկայության դեպքում, նույնականացման քարտի (մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայականի) սերիան ու համարը, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի սերիան ու համարը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը և նույնականացման քարտը տվող մարմնի ծածկագիրը, տրման օրը, ամիսը, տարին,

գ. հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում),

դ. սեռը,

ե. բնակության վայրի հասցեն,

զ. քաղաքացիությունը,

է. առնչությունը սոցիալական վճարներ կատարելուն,

ը. ***(ենթակետն ուժը կորցրել է 21.06.14 ՀՕ-70-Ն)***

2) վարձու աշխատողի (պայմանագրային եկամուտ ստացողների) դեպքում նաև՝

ա. աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ժամանակահատվածի (աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրի) սկիզբը և վերջը, մասնագիտությունը (պաշտոնը)՝ ըստ գործատուների,

բ. գործատուի (գործատուների) հարկ վճարողի հաշվառման համարը, պետական ռեգիստրում գրանցման համարը,

գ. հաշվարկված (վճարված) աշխատավարձի ու դրան հավասարեցված այլ վճարումների, դրանցից հաշվարկված, վճարված եկամտային հարկի և սոցիալական վճարի չափերը՝ ըստ գործատուների և ըստ ամիսների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից նրա համար (օգտին) փոխանցված կուտակային հատկացումների չափը՝ ըստ ամիսների,

դ. վճարված պայմանագրային եկամտի, դրանից հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափերը՝ ըստ գործատուների և ըստ ամիսների,

ե. հարկվող եկամտից նվազեցված կամավոր կուտակային վճարի չափը (առկայության դեպքում),

զ. սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում՝ վճարման ենթակա եկամտային հարկը և սոցիալական վճարը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժերը,

է. գործատուի կողմից «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում և կարգով սոցիալական վճարը չփոխանցվելու դեպքում հաշվարկված տույժերը,

ը. վարձու աշխատողի չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը (սկիզբը և վերջը),

թ. վարձու աշխատողի մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը (սկիզբը և վերջը).

3) անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) դեպքում նաև՝

ա. պետական գրանցման օրը, ամիսը և տարին, պետական ռեգիստրում գրանցման համարը, ձեռնարկատիրական գործունեության տեսակը, ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու օրը, ամիսը և տարին (նոտարի դեպքում՝ պաշտոնում նշանակվելու և պաշտոնից ազատվելու օրը, ամիսը և տարին),

բ. ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու (պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու) և ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսելու (պետական գրանցման վկայականը հարկային մարմնից ստանալու) օրը, ամիսը և տարին (միայն անհատ ձեռնարկատիրոջ դեպքում),

գ. ձեռնարկատիրական գործունեությունից (նոտարական գործունեությունից) ստացված՝ շահութահարկի հարկման բազա (մինչև 2018 թվականը՝ եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ) համարվող եկամտի, հաշվարկված և վճարված շահութահարկի (մինչև 2018 թվականը՝ եկամտային հարկի) չափը, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում և կարգով շահութահարկը (եկամտային հարկը) չվճարելու և սույն օրենքով սահմանված կարգով անձնավորված հաշվարկը չներկայացնելու համար հաշվարկված տույժերն ու տուգանքները, հարկի վճարման օրը, ամիսը և տարին,

դ. ձեռնարկատիրական գործունեությունից (նոտարական գործունեությունից) ստացված՝ սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած սոցիալական վճարի չափը, սոցիալական վճարը կատարելու օրը, ամիսը և տարին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից նրա համար (օգտին) փոխանցված կուտակային հատկացումների չափը, կուտակային հատկացումները փոխանցելու օրը, ամիսը և տարին,

ե. վճարած շահութահարկի կանխավճարների չափը՝ վճարման օրը, ամիսը և տարին.

4) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի համակարգում գործունեության տեսակներով զբաղված անհատ ձեռնարկատիրոջ դեպքում նաև՝

ա. այդ գործունեության տեսակներով զբաղված համարվելու ժամանակահատվածի սկիզբը և ավարտը,

բ. վճարված շահութահարկի չափը՝ ըստ ամիսների,

գ. վճարված սոցիալական վճարի չափը՝ ըստ ամիսների,

դ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից նրա համար (օգտին) փոխանցված կուտակային հատկացումների չափը, կուտակային հատկացումները փոխանցելու օրը, ամիսը և տարին.

5) ինքնազբաղվածի դեպքում նաև՝

ա. գործունեության տեսակը՝ ըստ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված զբաղմունքների դասակարգչի,

բ. որպես ինքնազբաղված անձ ստացած՝ եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած եկամտային հարկի չափը, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում և կարգով եկամտային հարկը չվճարելու և սույն օրենքով սահմանված կարգով անձնավորված հաշվարկը չներկայացնելու համար հաշվարկված տույժերն ու տուգանքները, հարկի վճարման օրը, ամիսը և տարին,

գ. որպես ինքնազբաղված անձ ստացած՝ սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած սոցիալական վճարի չափը, սոցիալական վճարը

կատարելու օրը, ամիսը և տարին, ինչպես նաև փոխանցված կուտակային հատկացումների չափը, կուտակային հատկացումներ փոխանցելու օրը, ամիսը և տարին,

դ. ***(ենթակետն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-285-Ն)***

6) վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը, վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների տեսակը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և գործատուի միջոցներից վճարված նպաստի գումարների չափերը, նպաստից հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափերը, այդ գումարները փաստացի վճարելու ամիսը.։

7) եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց դեպքում նաև՝ Կառավարության սահմանած՝ հայտարարագրման համակարգի շրջանակներում անհրաժեշտ տվյալները:

### Հոդված 8. Անհատական հաշիվը

2. Անհատական հաշիվ բացում է լիազոր մարմինը՝

1) գործատուի ներկայացրած գրանցման հայտի հիման վրա.

2) ~~անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի, ինքնազբաղված անձի~~ ֆիզիկական անձի հարկային հաշվառման կանգնելու հիման վրա.

3) մասնակիցների ռեեստրը վարողի կողմից լիազոր մարմին ներկայացված՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավորության սկզբունքով անձի միանալու մասին որոշման վերաբերյալ տեղեկատվության հիման վրա.

4) սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացողի՝ հարկային հաշվառման կանգնելու հիման վրա:

### Հոդված 9. Տեղեկատվական բազայի ձևավորումը և վարումը

1. Տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները լիազոր մարմինը ստանում է՝

1) գործատուներից.

2) սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական անձանցից.

3) «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մասնակիցների ռեեստրը վարողից.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետական կառավարման մարմիններից:

5) ֆինանսական կազմակերպություններից և ապահովագրական ընկերություններից.

6) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայից:

2. Գործատուները և սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական անձինք սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված տվյալները ներկայացնում են սույն օրենքով սահմանված կարգով՝ գրանցման հայտերի և անձնավորված (պարզեցված) հաշվարկների միջոցով՝ էլեկտրոնային թվային ստորագրության կիրառմամբ:

Լիազոր մարմինը գործատուներին և սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական անձանց ապահովում է հասանելիություն՝ գրանցման հայտը և անձնավորված (պարզեցված) հաշվարկները ձևավորելու և էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերին:

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մասնակիցների ռեեստրը վարողը, Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, կենտրոնական դեպոզիտարիան, պետական կառավարման մարմինները տվյալները տրամադրում են էլեկտրոնային տարբերակով:

4. Գրանցման հայտը և անձնավորված (պարզեցված) հաշվարկը ձևավորելու և լիազոր մարմին ներկայացնելու կարգը, պետական կառավարման մարմինների և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մասնակիցների ռեեստրը վարողի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները լիազոր մարմին տրամադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ անձնավորված հաշվարկների, գրանցման հայտի ներքին և արտաքին ձևը, լրացման կարգը սահմանում է լիազոր մարմինը: Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների կողմից տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները լիազոր մարմին

տրամադրելու կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով:

**Հոդված 11. Տեղեկատվական բազան ձևավորելու համար անհրաժեշտ տվյալները անհատ ձեռնարկատերերի, նոտարների, ինքնազբաղվածների,** եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց, **սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված վարձու աշխատողների և պայմանագրային եկամուտ ստացողների կողմից ներկայացվելը**

1. Անհատ ձեռնարկատերերը, նոտարները, ինքնազբաղված անձինք, եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք սույն օրենքի հիման վրա անձնավորված հաշվարկները լիազոր մարմին են ներկայացնում ~~յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը~~ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ժամկետներում, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ վարձու աշխատողները և պայմանագրային եկամուտ ստացողները գործատուների համար սահմանված ժամկետում ներկայացնում են պարզեցված հաշվարկ:

2. Անհատ ձեռնարկատերերի, նոտարների, ինքնազբաղված անձանց, եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց ներկայացրած հաշվարկները տեղեկատվություն են պարունակում նախորդ տարվա ընթացքում իրենց ստացած շահութահարկի հարկման բազա և եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամուտների, այդ եկամուտներից պահված շահութահարկի (եկամտային հարկի), իսկ սոցիալական վճարներ կատարող անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված սոցիալական վճարների վերաբերյալ, ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված այլ տվյալներ:

**Հոդված 14. Տեղեկատվական բազայից պետական մարմիններին և այլ կազմակերպություններին տվյալներ տրամադրելը**

1. Տեղեկատվական բազայից լիազոր մարմինը տվյալներ է տրամադրում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին.

2) «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մասնակիցների ռեեստրը վարողին.

3) Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կազմակերպություններին, պետական կառավարման մարմիններին:

2. Սույն հոդվածը չի տարածվում բանկային և ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների վրա, որոնք լիազոր մարմինը պահպանում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

**Հոդված 169[1]. Հաշվապահական հաշվառումը (գրանցումը) խախտումով վարելը, երբ դա կարող է առաջացնել (առաջացրել է) հարկի նվազեցում, կամ հայտարարագիրը, հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը**

***(վերնագիրը լրաց. 27.11.06 ՀՕ-204-Ն, 24.10.07 ՀՕ-241-Ն, փոփ. 29.11.11 ՀՕ-294-Ն, 22.12.10 ՀՕ-264-Ն)***

Հաշվապահական հաշվառումից բացի, օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված հաշվարկի (հայտարարագրի) կամ հաշվարկի կամ հաշվետվության (այդ թվում՝ հաշվապահական) կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել (առաջացրել են) հարկի նվազեցում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև քսանհինգապատիկի չափով:

~~Բացառությամբ սույն հոդվածի երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերություններով սահմանված դեպքերի, հայտարարագիրը~~ Հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված հաշվարկի (հայտարարագրի), հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

~~Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին սահմանված ժամկետում չներկայացնելը՝~~

~~առաջացնում է նախազգուշացում:~~

~~Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) սույն հոդվածի երրորդ պարբերությամբ նախատեսված վարչական տույժի միջոցը կիրառելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, չներկայացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝~~

~~1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, որոնք հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) դրան նախորդող տարվա արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի~~

Հանրապետության ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր փայատեր, անդամ)՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով.

2) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով.

3) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, որոնք հաշվետու տարվա ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով.

4) սույն պարբերության 1-3-րդ կետերում չնշված ֆիզիկական անձանց համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) սույն հոդվածի չորրորդ պարբերությամբ նախատեսված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) սահմանված ժամկետում չներկայացնելու համար՝ սույն հոդվածի չորրորդ պարբերությամբ նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձը սույն հոդվածի չորրորդ պարբերության մեկից ավելի կետերում ներառված լինելու դեպքում այդ անձի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածի չորրորդ պարբերությամբ նախատեսված առավելագույն չափի տուգանքի մեծությունը:

***(169' -րդ հոդվածը փոփ. 11.05.92, 02.09.93 ՀՕ-79, 23.06.97 ՀՕ-133, 26.12.02 ՀՕ-517-Ն, 26.12.02 ՀՕ-499-Ն, 03.12.03 ՀՕ-44-Ն, 11.11.05 ՀՕ-217-Ն, լրաց. 27.11.06 ՀՕ-204-Ն, փոփ. 24.10.07 ՀՕ-241-Ն, 11.05.11 ՀՕ-155-Ն, 29.11.11 ՀՕ-294-Ն, 22.12.10 ՀՕ-264-Ն, փոփ., լրաց. 23.12.22 ՀՕ-594-Ն)***

***(23.12.22 ՀՕ-594-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

**Հոդված169.33Հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներ լրացնելը, որոնք չեն առաջացրել և չեն կարող առաջացնել հարկի նվազեցում**

1. Հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված հաշվարկի (հայտարարագրի), սխալ (ոչ հավաստի) տվյալներ լրացնելը, որոնք չեն առաջացրել և չեն կարող առաջացնել հարկի նվազեցում՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նախազգուշացման նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, սույն հոդվածով նախատեսված խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, սույն հոդվածով նախատեսված խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պատասխանատվության միջոցները չեն կիրառվում հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներն ինքնուրույն հայտնաբերելու և ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքերում:

***(169.33-րդ հոդվածը լրաց. 11.09.24 ՀՕ-334-Ն)***

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**Հոդված 15. Դրոշմանիշային վճարն ինքնուրույն վճարելը**

2. Դրոշմանիշային վճարներն ինքնուրույն կատարող՝ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը կատարում են ~~մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա մայիսի 1-ը ներառյալ~~ տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ ~~մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ~~ տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում, հիմք ընդունելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրոշմանիշային վճարի հաշվարկման համապատասխան բազաները: